ՈՒԺի մեջ է 2026թ. սեպտեմբերի 18-ից

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

Գլխավոր գործադիր տնօրեն

Հ. Անդրեասյան _____

28 օգոստոսի 2026թ.

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կողմից հաճախորդներից ներգրավվող ավանդների դիմաց վճարվող տոկոսադրույքները (այսուհետ՝ Սակագներ):

2. Ավանդների ներգրավման նախապայմաններ կարող են հանդիսանալ,

- Բանկի կողմից սահմանված տիպային պայմանագրի կնքումը,
- «Ճանաչիր հաճախորդիդ» հարցաթերթիկի լրացումը Հաճախորդի կողմից,
- Հաճախորդի համաձայնությունը՝ ՀՀ, օտարերկրյա և միջազգային օրենսդրություններով սահմանված դեպքերում և կարգով Բանկի կողմից իր մասին բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն երրորդ անձանց հրապարակելու վերաբերյալ,

-Բանկի կողմից հաճախորդի գործարար բնութագրի, գործարար հարաբերության նպատակի և նախատեսվող բնույթի բացահայտումը,

-Հաճախորդի վերաբերյալ ՄԱԿ-ի, ԱՄՆ-ի (OFAC), Եվրամիության (EU) կամ Բանկի հատուկ ցանկերում ՓԼ/ԱՖ, Միջազգային սանկցիաների գծով բացասական տեղեկությունների բացակայությունը,

- ֆիզիկական անձանց դեպքում՝ Միջազգային սանկցիայի տակ գտնվող երկրի կամ տարածքի քաղաքացի կամ ռեզիդենտ չլինելը, նշված երկրներում կամ տարածքներում կենսական շահերի բացակայությունը,

-Բանկի կողմից հաճախորդին ռիսկային չդասակարգելը/չհամարելը և/կամ հաճախորդի սպասարկումը ոչ նպատակահարմար չհամարելը,

-իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ Միջազգային սանկցիայի տակ գտնվող երկրում կամ տարածքում գրանցված չլինելը, գործունեության կամ գործարար կապերի, մասնակիցների (իրական շահառուների) ուղղակի կամ անուղղակի կապի բացակայությունը նշված երկրի կամ տարածքի հետ:

3. Սակագների ձևավորման հիմքում ընկած են միջազգային բանկային պրակտիկայում ծառայությունների մատուցման գոյություն ունեցող հիմնադրույթները:

4. Սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում, Բանկի տարածքում հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:

5. Հաճախորդի կողմից որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի կամ պայմանագրի ստորագրումը հաստատում է Սակագների, ինչպես նաև Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:

6. Սակագներով ուղղակի չնախատեսված, սակայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների, գործառնությունների ու գործարքների պայմանները սահմանվում են Բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով:

7. Առանձին դեպքերում, հաշվի առնելով հաճախորդի՝ Բանկում ունեցած դրամական հոսքերի չափը, հաշիվների մնացորդները, վարկային և/կամ ավանդային պատմությունը, գործարար համբավը, Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածը, կարող են առաջարկվել Սակագներից արտոնյալ պայմաններով (ոչ ստանդարտ) Սակագներ:

8. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

9. Բանկի ներքին իրավական ակտերով և/կամ կոնտրագենտների և/կամ Բանկի հաճախորդների հետ կնքված պայմանագրերով որոշակի շրջանակի կամ առանձին ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց և/կամ անհատ ձեռնարկատերերի համար կարող են սահմանվել Սակագներից տարբերվող այլ սակագներ:

10. Բանկը հաճախորդներին ծառայություններ է մատուցում աշխատանքային օրերին[1]՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-17:30 («Հոմպլեքս Մոլ» մասնաճյուղում՝ բոլոր օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 10:00-22:00), բացառությամբ հետևյալ դեպքերի.

[1] Աշխատանքային օրեր՝ երկուշաբթիից ուրբաթ օրերը (բացառությամբ այն օրերի, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն ոչ աշխատանքային օրեր), ինչպես նաև այն օրերը, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն աշխատանքային օրեր:

- մասնաճյուղերի կողմից ծառայությունների դիմաց վճարումների ընդունում և հաշվարկադրամարկղային սպասարկում՝ աշխատանքային օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-16:30-ը («Հոմպլեքս Մոլ» մասնաճյուղում՝ բոլոր օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 10:30-21:30):

- հեռահար՝ acba digital համակարգով և ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի (այսուհետ՝ ՖԳԻԱՍ) միջոցով ծառայությունների մատուցում՝ ցանկացած օր՝ առանց ժամային սահմանափակման, եթե տվյալ գործարքի կատարման համար Բանկի ներքին ընթացակարգերով այլ սահմանափակում նախատեսված չէ:
- ինչպես նաև, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ առանձին ծառայությունները կարգավորող պայմաններում, պայմանագրերում, Բանկի ներքին իրավական ակտերում կամ www.acba.am Բանկի պաշտոնական կայքում:

Բանկում գործառնությունների ձևակերպման համար գործառնական օր են համարվում երկուշաբթիից կիրակի օրերը՝ ժամը 9:00-ից 22:00-ը:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

ԱՎԱՆԴ ԴԱՍԱԿԱՆ

Դասական ժամկետային ավանդներն ընդունվում են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով և ՌԴ ռուբլով:
Ավանդի նվազագույն գումարը կազմում է 50 000 ՀՀ դրամ, 200 ԱՄՆ դոլար, 200 եվրո, 5 000 ՌԴ ռուբլի:
Դասական ավանդների ժամկետը կարող է լինել 1-36 ամիս (31-1098 օր):
Տվյալ ավանդատեսակը նախատեսում է ավանդային հաշվին գումարների մուտքագրում, բացառությամբ ավանդի գործողության ժամկետի վերջին երեք ամիսների:
Ավանդի համալրումների արդյունքում ավանդի գումարը չի կարող գերազանցել ավանդի պայմանագրային գումարի քառապատիկը, ընդ որում՝ համալրումների արդյունքում ավանդի գումարը չպետք է գերազանցի նաև 250 000 000 ՀՀ դրամը, 600 000 ԱՄՆ դոլարը, 600 000 եվրոն, 50 000 000 ՌԴ ռուբլին:
Եթե պայմանագրային գումարի քառապատիկը չի գերազանցում 10 000 000 ՀՀ դրամը, 24 000 ԱՄՆ դոլարը, 24 000 եվրոն, 2 000 000 ՌԴ ռուբլին ապա ավանդը կարող է համալրվել մինչև ավանդի գումարի 10,000,000 ՀՀ դրամին, 24 000 ԱՄՆ դոլարին, 24 000 եվրոյին, 2 000 000 ՌԴ ռուբլուն հավասարվելը:

acba digital ինտերնետ բանկինգ համակարգով ավանդների ներդրման դեպքում գործում են հետևյալ տոկոսադրույքները.

Տոկոսների վճարման հաճախակա-նությունը	**Արժույթը**	**1 ամսից մինչև 3 ամիս ներառյալ (31 - 90 օր)**	**3 ամսից ավել մինչև 6 ամիս ներառյալ (91 - 180 օր)**	**6 ամսից ավել մինչև 9 ամիս ներառյալ (181 - 270 օր)**	**9 ամսից ավել մինչև 12 ամիս ներառյալ (271 – 366 օր)**	**12 ամսից ավել մինչև 24 ամիս ներառյալ (367 – 732 օր)**	**24 ամսից ավել մինչև 36 ամիս ներառյալ (733 – 1098 օր)**
Ժամկետի վերջում	ՀՀ դրամ	4.6%	6.1%	7.1%	8.1%	9.1%	9.6%
	ԱՄՆ դոլար	0.6%	1.6%	2.6%	3.35%	4.1%	4.35%
	եվրո	0.35%	0.6%	1.35%	1.6%	2.1%	2.35%
	ՌԴ ռուբլի	1.1%	2.1%	3.1%	3.6%	4.1%	-

Բանկի մասնաճյուղերում ավանդի ներդրման դեպքում տոկոսադրույքները սահմանվում են 0.1%-ով ցածր:
Ավանդատուն (համատեղ ավանդի դեպքում համատեղ ավանդ ներդրած բոլոր ավանդատուները), կախված ավանդային հաշիվներին առկա գումարի չափից, կարող է ձեռք բերել.

- անվճար VISA Classic/MasterCard Standard քարտ, եթե տվյալ պահին ավանդային հաշվին (հաշիվներին) առկա գումարը (հանրագումարը) հավասար է կամ գերազանցում է 500 000 ՀՀ դրամը (դրան համարժեք արտարժույթը) կամ
- անվճար VISA Gold/MasterCard Gold քարտ, եթե տվյալ պահին ավանդային հաշվին (հաշիվներին) առկա գումարը (հանրագումարը) հավասար է կամ գերազանցում է 7.5 մլն ՀՀ դրամը (դրան համարժեք արտարժույթը) կամ
- արտոնյալ պայմաններով American Express Gold կամ American Express Blue քարտեր՝ համաձայն Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման սակագների:

ԱՎԱՆԴ ԱՄԵՆԱՄՍՅԱ

Ամենամսյա ժամկետային ավանդներն ընդունվում են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով և ՌԴ ռուբլով:
Ավանդի նվազագույն գումարը կազմում է 50 000 ՀՀ դրամ, 200 ԱՄՆ դոլար, 200 եվրո, 5 000 ՌԴ ռուբլի:

Ամենամսյա ժամկետային ավանդներն ընդունվում են 1-24 ամիս (31 – 732 օր) ժամկետով:

Ավանդատուն իրավունք ունի ավանդային պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ավանդային հաշվին մուտքագրել գումարներ, բացառությամբ ավանդի գործողության ժամկետի վերջին երեք ամիսների:

Ավանդի համալրումների արդյունքում ավանդի գումարը չի կարող գերազանցել ավանդի պայմանագրային գումարի քառապատիկը, ընդ որում՝ համալրումների արդյունքում ավանդի գումարը չպետք է գերազանցի նաև 250 000 000 ՀՀ դրամը, 600 000 ԱՄՆ դոլարը, 600 000 եվրոն, 50 000 000 ՌԴ ռուբլին:

Եթե պայմանագրային գումարի քառապատիկը չի գերազանցում 10 000 000 ՀՀ դրամը, 24 000 ԱՄՆ դոլարը, 24 000 եվրոն, 2 000 000 ՌԴ ռուբլին ապա ավանդը կարող է համալրվել մինչև ավանդի գումարի 10,000,000 ՀՀ դրամին, 24 000 ԱՄՆ դոլարին, 24 000 եվրոյին, 2 000 000 ՌԴ ռուբլուն հավասարվելը:

acba digital ինտերնետ բանկինգ համակարգով ավանդների ներդրման դեպքում գործում են հետևյալ տոկոսադրույքները.

Տոկոսների վճարման հաճախակա-նությունը	**Արժույթը**	**առաջին 3 ամիսների համար (31 - 90 օր)**	**4-6-րդ ամիսների համար (91 - 180 օր)**	**7-9-րդ ամիսների համար (181 - 270 օր)**	**10 և ավել ամիսների Համար (271 և ավելի օր)**
Ամսական	ՀՀ դրամ	4.35%	5.6%	6.85%	8.1%
	ԱՄՆ դոլար	0.35%	1.35%	2.35%	3.35%
	եվրո	-	0.6%	1.1%	1.6%
	ՌԴ ռուբլի	0.6%	1.6%	2.6%	3.6%

Բանկի մասնաճյուղերում ավանդի ներդրման դեպքում տոկոսադրույքները սահմանվում են 0.1%-ով ցածր:

Առաջին, երկրորդ, երրորդ եռամսյակի (90-րդ, 180-րդ, 270-րդ օրերի) վերջում նախորդ ամիսների համար ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով և ՌԴ ռուբլով ավանդների դիմաց ավանդատուին միանվագ վճարվում է բոնուս՝ ՀՀ դրամի դեպքում 1.25-ական տոկոս (տարեկան), ԱՄՆ դոլարի և ՌԴ ռուբլու դեպքում 1-ական տոկոս (տարեկան), եվրոյի դեպքում՝ 0.5-ական տոկոս (տարեկան)՝ հաշվարկված համապատասխանաբար այդ ամիսներին ավանդային հաշվին առկա գումարների օրական մնացորդների նկատմամբ:

Ավանդատուն (համատեղ ավանդի դեպքում համատեղ ավանդ ներդրած բոլոր ավանդատուները), կախված ավանդային հաշիվներին առկա գումարի չափից, կարող է ձեռք բերել.

- անվճար VISA Classic/MasterCard Standard քարտ, եթե տվյալ պահին ավանդային հաշվին (հաշիվներին) առկա գումարը (հանրագումարը) հավասար է կամ գերազանցում է 500 000 ՀՀ դրամը (դրան համարժեք արտարժույթը), կամ
- անվճար VISA Gold/MasterCard Gold քարտ, եթե տվյալ պահին ավանդային հաշվին (հաշիվներին) առկա գումարը (հանրագումարը) հավասար է կամ գերազանցում է 7.5 մլն ՀՀ դրամը (դրան համարժեք արտարժույթը): կամ
- արտոնյալ պայմաններով American Express Gold կամ American Express Blue քարտեր՝ համաձայն Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման սակագների:

ԱՎԱՆԴ ԿՈՒՏԱԿՎՈՂ

Կուտակվող ժամկետային ավանդներն ընդունվում են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով, և ՌԴ ռուբլով:

Ավանդի նվազագույն գումարը կազմում է 50 000 ՀՀ դրամ, 200 ԱՄՆ դոլար, 200 եվրո, 5 000 ՌԴ ռուբլի:

Կուտակվող ավանդի ժամկետը կարող է լինել 6-24 ամիս (181-732 օր):

Ավանդատուն իրավունք ունի ավանդային պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ավանդային հաշվին մուտքագրել գումարներ, բացառությամբ ավանդի գործողության ժամկետի վերջին երեք ամիսների:

Ավանդի համալրումների արդյունքում ավանդի գումարը չի կարող գերազանցել ավանդի պայմանագրային գումարի քառապատիկը, ընդ որում՝ համալրումների արդյունքում ավանդի գումարը չպետք է գերազանցի նաև 250 000 000 ՀՀ դրամը, 600 000 ԱՄՆ դոլարը, 600 000 եվրոն, 50 000 000 ՌԴ ռուբլին:

Եթե պայմանագրային գումարի քառապատիկը չի գերազանցում 10 000 000 ՀՀ դրամը, 24 000 ԱՄՆ դոլարը, 24 000 եվրոն, 2 000 000 ՌԴ ռուբլին ապա ավանդը կարող է համալրվել մինչև ավանդի գումարի 10,000,000 ՀՀ դրամին, 24 000 ԱՄՆ դոլարին, 24 000 եվրոյին, 2 000 000 ՌԴ ռուբլուն հավասարվելը:

acba digital ինտերնետ բանկինգ համակարգով ավանդների ներդրման դեպքում գործում են հետևյալ տոկոսադրույքները.

Ավանդի արժույթը	**Տարեկան տոկոսադրույքը**

ՀՀ դրամ	8.1%
ԱՄՆ դոլար	3.35%
եվրո	1.6%
ՌԴ ռուբլի	3.6%

Բանկի մասնաճյուղերում ավանդի ներդրման դեպքում տոկոսադրույքները սահմանվում են 0.1%-ով ցածր:

Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում յուրաքանչյուր լրացած ամսվա համար ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարը մուտքագրվում է ավանդատուի ավանդային հաշվին, ընդ որում՝ առաջին վեց ամիսների տոկոսագումարը մուտքագրվում է վեցերորդ ամսվա (181-րդ օրվա) վերջին: Առաջին վեց ամիսների ընթացքում հաշվարկվում և վեցերորդ ամսվա (181-րդ օրվա) վերջում Ավանդատուին միանվագ վճարվում է բոնուս ըստ ավանդի արժույթի՝ ՀՀ դրամի համար՝ 0.12%, ԱՄՆ դոլարի համար՝ 0.02%, եվրոյի համար՝ 0.003% և ռուսական ռուբլու համար՝ 0.03% (տարեկան)՝ հաշվարկված համապատասխանաբար այդ ամիսներին ավանդային հաշվին առկա գումարների օրական մնացորդների նկատմամբ:

Ավանդատուն (համատեղ ավանդի դեպքում համատեղ ավանդ ներդրած բոլոր ավանդատուները), կախված ավանդային հաշիվներին առկա գումարի չափից, կարող է ձեռք բերել.

- անվճար VISA Classic/MasterCard Standard քարտ, եթե տվյալ պահին ավանդային հաշվին (հաշիվներին) առկա գումարը (հանրագումարը) հավասար է կամ գերազանցում է 500 000 ՀՀ դրամը (դրան համարժեք արտարժույթը), կամ
- անվճար VISA Gold/MasterCard Gold քարտ, եթե տվյալ պահին ավանդային հաշվին (հաշիվներին) առկա գումարը (հանրագումարը) հավասար է կամ գերազանցում է 7.5 մլն ՀՀ դրամը (դրան համարժեք արտարժույթը): կամ
- արտոնյալ պայմաններով American Express Gold կամ American Express Blue քարտեր՝ համաձայն Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման սակագների:

ԱՎԱՆԴ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երեխաների համար ժամկետային ավանդներն ընդունվում են ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով: Ավանդի նվազագույն գումարը կազմում է 50 000 ՀՀ դրամ կամ 200 ԱՄՆ դոլար:

Երեխաների համար ավանդի ներդրման ժամկետը կարող է լինել մինչև երեխայի 18 տարին լրանալը, իսկ ավանդի ներդրման պահին երեխայի տարիքը չի կարող գերազանցել 15 տարեկանը:

Ավանդատուն իրավունք ունի ավանդային պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ավանդային հաշվին մուտքագրել գումարներ, բացառությամբ ավանդի գործողության ժամկետի վերջին երեք ամիսների ընթացքում:

Երեխաների համար գործող ավանդի տոկոսադրույքը փոփոխվում է տարին մեկ անգամ՝ տվյալ ավանդի ներդրման ամսաթվին հաջորդող յուրաքանչյուր տարվա նույն ամսաթվին (ոչ աշխատանքային օրվա հետ համընկնելու դեպքում՝ հաջորդ աշխատանքային օրը):

Երեխաների համար ժամկետային ավանդի տոկոսադրույքներն են՝

Մինչև 25.03.2022թ.-ը acba digital ինտերնետ բանկինգ համակարգով ներդրված ավանդների դեպքում.

Ավանդի արժույթը	**Տարեկան տոկոսադրույքը**
ՀՀ դրամ	9.6%
ԱՄՆ դոլար	4.3%

Մինչև 25.03.2022թ.-ը Բանկի մասնաճյուղերում ներդրված ավանդների դեպքում տոկոսադրույքները սահմանվում են 0.1%-ով ցածր:

25.03.2022թ.-ից acba digital ինտերնետ բանկինգ համակարգով ավանդների ներդրման դեպքում գործում են հետևյալ տոկոսադրույքները.

Ավանդի արժույթը	**Տարեկան տոկոսադրույքը**
ՀՀ դրամ	9.1%
ԱՄՆ դոլար	4.1%

25.03.2022թ.-ից Բանկի մասնաճյուղերում ավանդների ներդրման դեպքում տոկոսադրույքները սահմանվում են 0.1%-ով ցածր:

25. 03. 2022թ.-ից ներդրված ավանդների դեպքում պայմանագրի ավարտին հաշվարկվում և ավանդատուին միանվագ վճարվում է բոնուս՝ ՀՀ դրամով ավանդների դեպքում տարեկան 0.5%-ի չափով, իսկ ԱՄՆ դոլարով ավանդների դեպքում տարեկան 0.2%-ի չափով՝ հաշվարկված ավանդի ամբողջ տևողության համար՝ ավանդային հաշվին առկա գումարների օրական մնացորդների նկատմամբ:

Պայմանագրի գործողության ընթացքում ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարները մուտքագրվում են Ավանդատուի ավանդային հաշվին ավանդի ներդրման ամսաթվին հաջորդող յուրաքանչյուր տարվա նույն ամսաթվին (ոչ աշխատանքային օրվա հետ համընկնելու դեպքում՝ հաջորդ աշխատանքային օրը):

Բոլոր ավանդատեսակների համար 500 միլիոն ՀՀ դրամից բարձր ժամկետային ավանդների պայմանները (տոկոսադրույք, ժամկետ և այլն) սահմանվում են պայմանագրային հիմունքներով: Եթե հաճախորդն ունի ընթացիկ ժամկետային ավանդներ, և նոր ներդրվող ավանդը ներդնելուց հետո հաճախորդի ժամկետային ավանդների ընդհանուր գումարը կգերազանցի 500 միլիոն ՀՀ դրամը, և նոր ներդրվող ժամկետային ավանդի գումարը մեծ կամ հավասար է 100 մլն ՀՀ դրամից, ապա նոր ներդրվող ավանդի պայմանները սահմանվում են պայմանագրային հիմունքներով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

ԲԻԶՆԵՍ ԱՎԱՆԴ

Բիզնես ավանդներն ընդունվում են ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով և ՌԴ ռուբլով:

Ավանդի նվազագույն գումարը կազմում է 500 000 ՀՀ դրամ, 1 000 ԱՄՆ դոլար, 1 000 եվրո, 50 000 ՌԴ ռուբլի:

Բիզնես ավանդի ժամկետը կարող է լինել 1-24 ամիս (եվրոյով ավանդների և բոլոր արժույթների ամսական կապիտալացման տարբերակի դեպքում՝ 6-24 ամիս):

Ավանդատուն կարող է ավանդային հաշվին մուտքագրել գումարներ՝ բացառությամբ ավանդի գործողության վերջին երեք ամիսների ընթացքում՝ առավելագույնը ավանդի պայմանագրային գումարի 100%-ի չափով (երկարաձգման հնարավորությամբ ավանդների դեպքում՝ երկարաձգման պահի դրությամբ ավանդի մայր գումարի):

Ավանդատուն կարող է ավանդային հաշվից ելքագրել գումարներ՝ բացառությամբ ավանդի գործողության առաջին երեք ամիսների ընթացքում՝ առավելագույնը ավանդի պայմանագրային գումարի 30%-ի չափով (երկարաձգման հնարավորությամբ ավանդների դեպքում՝ երկարաձգման պահի դրությամբ ավանդի մայր գումարի):

Ավանդատուն կարող է ընտրել տոկոսագումարների վճարման հետևյալ եղանակներից մեկը.

- ամսական վճարում
- ամսական կապիտալացում
- ժամկետի վերջում վճարում

Տոկոսագումարների վճարման հաճախականություն	**Արժույթը**	**1 ամսից մինչև 3 ամիս ներառյալ (31 - 90 օր)**	**3 ամսից մինչև 6 ամիս ներառյալ (91 - 180 օր)**	**6 ամսից մինչև 9 ամիս ներառյալ (181 - 270 օր)**	**9 ամսից մինչև 12 ամիս ներառյալ (271 – 366 օր)**	**12 ամսից մինչև 24 ամիս ներառյալ (367 – 732 օր)**
Ժամկետի վերջում վճարում	ՀՀ դրամ	4.1%	5.6%	6.6%	7.6%	8.6%
	ԱՄՆդոլար	-	1.1 %	2.1 %	2.85 %	3.6 %
	եվրո	-	-	0.85 %	1.1 %	1.6 %
	ՌԴ ռուբլի	0.6 %	1.6 %	2.6 %	3.1 %	3.6 %
Ամսական վճարում կամ կապիտալացում	ՀՀ դրամ	-	-	5.6%	6.6%	8.1%
	ԱՄՆդոլար	-	-	1.85 %	2.6 %	3.1 %
	եվրո	-	-	0.35 %	0.85 %	1.35 %
	ՌԴ ռուբլի			2.1 %	2.6 %	3.1 %

Բանկի մասնաճյուղերում ավանդի ներդրման դեպքում տոկոսադրույքները սահմանվում են 0.1%-ով ցածր:

Գումարի ավելացման հնարավորությունն ընտրելու դեպքում սահմանված տոկոսադրույքը նվազում է 0.8%-ով ՀՀ դրամի, 0.3%-ով ԱՄՆ դոլարի, 0.2%-ով եվրոյի և 0.4%-ով ՌԴ ռուբլու դեպքում:

Գումարի նվազեցման հնարավորությունն ընտրելու դեպքում սահմանված տոկոսադրույքը նվազում է 1.3%-ով ՀՀ դրամի, 0.5%-ով ԱՄՆ դոլարի, 0.3%-ով եվրոյի և 0.6%-ով ՌԴ ռուբլու դեպքում:

Միաժամանակ գումարի ավելացման և նվազեցման հնարավորությունն ընտրելու դեպքում սահմանված տոկոսադրույքը նվազում է 1.8%-ով ՀՀ դրամի, 0.7%-ով ԱՄՆ դոլարի, 0.5%-ով եվրոյի և 0.8%-ով ՌԴ ռուբլու դեպքում:

Ավանդի տարեկան անվանական տոկոսադրույքը որոշվում է որպես սահմանված տոկոսադրույքի (ելնելով ընտրված ժամկետից և արժույթից) և ընտրված հնարավորությունների արժեքների թվաբանական գումար:

Ամսական կապիտալացման տարբերակի դեպքում յուրաքանչյուր լրացած ամսվա համար ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարը մուտքագրվում է Ավանդատուի ավանդային հաշվին, ընդ որում՝ առաջին 6 ամսվա տոկոսագումարը մուտքագրվում է 6-րդ ամսվա վերջում:

Տոկոսագումարների ամսական վճարման կամ տոկոսագումարների ամսական կապիտալացման տարբերակով բիզնես ավանդների(28.04.2025թ.-ից հետո կնքված) ժամկետից շուտ դադարեցման դեպքում ավանդատուի կողմից պետք է վճարվի ավանդի վաղաժամ դադարեցման վճար, որը կազմում է ավանդի՝ ժամկետից շուտ դադարեցման օրվան նախորդող օրերի համար ավանդային պայմանագրի համաձայն վճարված կամ կապիտալացված տոկոսագումարների և ավանդի՝ ժամկետից շուտ դադարեցման օրվան նախորդող օրերի համար 0.1% տարեկան(զրո ամբողջ մեկ տոկոս) տոկոսադրույքով վերահաշվարկված տոկոսագումարների դրական տարբերությունը: Արտարժութային ավանդների դեպքում ավանդի վաղաժամ դադարեցման վճարի հաշվարկը կատարվում է ավանդի արժույթով :

Ավանդի վաղաժամ դադարեցման վճարը Բանկի կողմից կարող է անակցեպտ գանձվել Ավանդատուի բանկային հաշիվներից:

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

- Դրամային և արտարժութային ավանդը պայմանագրային ժամկետից շուտ պահանջելու դեպքում մեկ (իրավաբանական անձանց դեպքում՝ երեսուն) բանկային օրվա ընթացքում ավանդատուին կվճարվի ավանդի գումարը և մինչև ավանդի դադարեցման օրվան նախորդող օրերի համար չվճարված տոկոսագումարները՝ տարեկան 0.1% չափով:
- Յուրաքանչյուր հաճախորդի ՌԴ ռուբլով ավանդային բոլոր հաշիվներին կանխիկ մուտքային գործառնությունների առավելագույն սահմանաչափը մեկ աշխատանքային օրվա համար 200 000 ՌԴ ռուբլի է:
- Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում ֆիզիկական անձանց կողմից ստացված տոկոսագումարները ենթակա են հարկման 10%-ի չափով՝ ՀՀ գործող օրենսդրության համաձայն:
- «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ում ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից»՝ հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝
- միայն դրամային ավանդների դեպքում 16 մլն ՀՀ դրամ,
- միայն արտարժութային ավանդի դեպքում 7 մլն ՀՀ դրամ,
- և՛ դրամային (7 միլիոնից ավել), և՛ արտարժութային ավանդների դեպքում միայն դրամային ավանդը - մինչև 16 մլն ՀՀ դրամի չափով,
- և՛ դրամային (7 միլիոնից պակաս), և՛ արտարժութային ավանդների դեպքում - դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 մլն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով:
- Ժամկետային ավանդային հաշիվների համար Բանկի կողմից նախատեսված կամ սահմանված չեն տարեկան տոկոսային եկամտաբերությունը նվազեցնող սակագներ կամ այլ պայմաններ:
- Տոկոսագումարը հաշվարկվում է օրական կտրվածքով՝ հաշվին առկա մնացորդի նկատմամբ:
- Ժամկետային ավանդների շրջանակներում՝ ավանդային հաշվին առկա գումարից կախված, յուրաքանչյուր ավանդի հիման վրա կարող է տրամադրվել 1 անվճար քարտ:
- Ավանդային հաշիվներին սույն սակագնով սահմանված սահմանաչափերից ավել մուտքագրված գումարները կմուտքագրվեն ավանդատուի՝ փոխանցվող գումարի արժույթով ընթացիկ հաշվին, տվյալ արժույթով ընթացիկ հաշվի բացակայության դեպքում՝ դրամային ընթացիկ հաշվին:

ԱՎԱՆԴԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

ԱՎԱՆԴ ԴԱՍԱԿԱՆ

Տոկոսների վճարման հաճախակա-նությունը	Արժույթը	1 ամսից մինչև 3 ամիս ներառյալ (31 - 90 օր)	3 ամսից ավել մինչև 6 ամիս ներառյալ (91 - 180 օր)	6 ամսից ավել մինչև 9 ամիս ներառյալ (181 - 270 օր)	9 ամսից ավել մինչև 12 ամիս ներառյալ (271 – 366 օր)	12 ամսից ավել մինչև 24 ամիս ներառյալ (367 – 732 օր)	24 ամսից ավել մինչև 36 ամիս ներառյալ (733 – 1098 օր)
Ժամկետի վերջում	ՀՀ դրամ	4.68%	6.19%	7.16%	8.1%	8.72%	8.80%
	ԱՄՆ դոլար	0.60%	1.61%	2.61%	3.35%	4.02%	4.17%
	եվրո	0.35%	0.60%	1.35%	1.60%	2.08%	2.30%
	ՌԴ ռուբլի	1.10%	2.11%	3.11%	3.60%	4.02%	-

ԱՎԱՆԴ ԱՄԵՆԱՄՍՅԱ

Տոկոսների վճարման հաճախակա-նությունը	Արժույթը	առաջին 3 ամիսների համար (31 - 90 օր)	4-6-րդ ամիսների համար (91 - 180 օր)	7-9-րդ ամիսների համար (181 - 270 օր)	10 և ավել ամիսների Համար (271 և ավելի օր)
Ամսական	ՀՀ դրամ	4.44%	5.74%	7.05%	8.37%
	ԱՄՆ դոլար	0.35%	1.36%	2.37%	3.39%
	եվրո	-	0.30%	0.90%	1.46%
	ՌԴ ռուբլի	0.60%	1.61%	2.63%	3.65%

ԱՎԱՆԴ ԿՈՒՏԱԿՎՈՂ

Ավանդի արժույթը	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
ՀՀ դրամ	8.39%
ԱՄՆ դոլար	3.40%
եվրո	1.61%
ՌԴ ռուբլի	3.66%

ԱՎԱՆԴ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մինչև 25.03.2022թ.-ը ներդրված ավանդների դեպքում

Ավանդի արժույթը	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
ՀՀ դրամ	9.61%
ԱՄՆ դոլար	4.30%

25.03.2022թ.-ից ներդրված ավանդների դեպքում.

Ավանդի արժույթը	Տարեկան տոկոսային եկամտաբերություն
ՀՀ դրամ	9.11%
ԱՄՆ դոլար	4.12%

*Տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը հաճախորդի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում: Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկները իրականացվել են՝ համաձայն «Բանկային ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկումը կանոնակարգ 8/02»-ի: Եթե տոկոսադրույքը վերաբերում է որոշակի ժամկետային միջակայքի, ապա տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկն իրականացվել է՝ հիմք ընդունելով տվյալ միջակայքի առավելագույն ժամկետայնությունը: